

**ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ
Երևանի պետական համալսարան**

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Եղ, սպարապե՞ն. եթէ դու զաս,
Մինք տանով կը տանք մարդը նոր դարի
Եղի՛ր մեզ պաշտպան, եղի՛ր մարդուկից,
Լե՛ռ մեզ առաջնորդ, հօք զօրակից:

Ներսէս արքեպիսկոպոս. Պոզապալեան

Հայ ժողովրդի կյանքում սպարապետ Վարդան Մամիկոնյանը (388/91-451) բախտորոշ դեր է խաղացել: Նրա լուսավոր կերպարն ավելի քան մեկուկես հազարամյակ ուղեկցել է աշխարհասփյուռ հայորդիներին: Սակայն այսօր երևի շատերը չգիտեն, թե ինչպես է ստեղծվել մեր ազգային մեծ հերոսի առավել տարածված ու հայտնի դիմապատկերը: Այդ մկարի

ստեղծման հակիրճ պատմությունն իր ժամանակին տվել է նշանավոր մանկավարժ, գրական-թատերական գործիչ Սեղրակ Մամիկոնյանը (1844-1915), որի «Վարդան գորավարի պատկերը» վերտառությամբ հոդվածը¹, ցավոր, շուտով մոռացության է մատնվել:

Մինչև մեր սովոր հոդվածի բուն ջյութին անցնելը, ցամանակում նմք մեր խորին երախտագիտությունը հայտնել Մարտիրոս Սիմոնյանի շառավիկո, կենսարանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ելենա Սիմոնյանին՝ մի շաբթ կարևոր և նզակի նյութեր տրամադրելու համար, ինչպես նաև դոկտոր Վահան Թութիկյանին, որի «Վարդանի հավա”տը, թե՝ Հազկերոյի վախը» հոդվածը² մեզ հուշեց սպարապետի դիմանկարի ստեղծման պատմությամբ վերստին անդրադանալու միտքը:

Այդու կրկին վերադառնամք վերոնիշյալ դիմանկարի մոռացված պատմությամը: Ս. Մանիկոնյանը իր հոդվածում նշում է, որ «գրչագիրներում Վարդանի պատկերը քիչ է պատճիռում, այնուղի նա մկանվում է միշտ չալմայով, սոսկական ոչ զինվորական հագուստով, չոքած, կամ ծալլապատիկ նստած, կարծես թե որպես աղոթյալ-աղոթող»³: Իհարկե, ձեռագիր մատյաններում եղած մանրանկարների հիման վրա անհմաստ էր նշված տեսքով նկարն մեծ զորավարին:

¹ Տե՛ս «Հովիտ» հանդես, 1914 թ., թիվ 15:

² Տե՛ս «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» հանդես, 1999, թիվ 2, էջ 4-5:

³ Ս. Մանիկոնյան, Վարդան գորավարի պատկերը, «Հովիտ», 1914, թիվ 15:

Հաշվի առնելով այս ամենը, ազգային-պահպանողական անվանի գործիչ Կարապետ Եզյանը (1835, Մուսկվա - 1905, Պետերբուրգ), որը չափազանց հայրենասեր անձնավորություն էր, 1850-ականների վերջերին Մուսկվա ժամանած մի ֆրանսիացի նկարչի ծանոթացնում է Վարդան Մամիկոնյանի գործությունը և 451 թ. մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտի մամրամաների մետք ու խնդրում նրան՝ ստեղծել պարապետի հինգամական դիմանմկարը: Մեզ չմաջողվեց պարզել ֆրանսիացի նկարչի հնքնությունը, այս մասին լուսում է նաև Ս. Մամիկոնյանը: Մի բան, առկայն, ակնհայտ է, որ նկարիչը Կ. Եղյանին խոստացել է ստեղծել պարապետի պատկերը և, շատ շտուռ, կատարել է իր խոստումը: Նա վերոիշշալ գրուցից հետո սկսում է ուսումնասիրել հայկական տիպիկ դիմագերը և այդ նպատակով վերցնում է Նիկողայոս Ալադայյանի ու Պետերբուրգի համալսարանի ուսանող, հետազայտման հասարակական գործիչ թվաբանության ուսուցիչ և «Հյուսիսափայլ» ամսագրի աշխատակից Մարտիրոս Սիմոնյանի (1838-1883)⁴ լուսանկարները: Ի դեպ, վերջինին մասին Կ. Թ. - մ «Հովհիտ» հանդեսում գրել է: «Զնայելով իր ուսուցչական ծանր ու սրտամաշ պարապմունքներին, Մարտիրոս Սիմոնյանը ազատ ժամկետին պարապել է և գրականությամբ: - Բա դեռ ուսանող ժամանակ թարգմանեց աշխարհաբար քաղցրախոս Եղյանի գովածքը. այնումենակ գրա աշխատասիրությանն են պատկանում թվաբանության ձեռնարկը և դասավորերը, որոնց այնքան մեծ կարիք էր զգացվում այն ժամանակ մեր ուսումնարաններում⁵:

Այսպիսով, Մ. Սիմոնյանի և Ն. Ալադայյանի լուսանկարները հիմք ընդունելով՝ ֆրանսիացի նկարիչը ստեղծում է Վարդան գորավարի պատկերը՝ «մի զինվոր հոռվմեական տարազով, որպես իդեալական Վարդան, որ ձեռքին ունի ոչ թե մերկացած սուր, այլ պատյանով մի դաշովն, որպես մի խորհրդանշական հավատով զինվորության»⁶: Նկարիչն այս դիմանմկարը հանձնում է Կ. Եղյանին, որը նորաստեղծ պատկերը փութով բազմացնում և ուղարկում է թեմակալ առաջնորդներին, որպեսզի նրանք տարածեն ժողովրդի մեջ:

Դրամից ավելի քան մեկ դար հետո, 1983-ին, Հայաստանի ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը ստեղծել է «Վարդանանք» համբարձու և եզակի պատկերագործը (գորեգեն):

Սպարապետ Վարդան Մամիկոնյանի ցարդ ստեղծված լավագույն նկարների շարքը պիտի դասել նաև Մատունադարանի շենքի սրբածի «Ավարայրի ճակատամարտը» (հեղինակ:

⁴ «Մարտիրոս Սիմոնեանցը օրինակելի ժրաշամուրեամբ աւարտելով իր ուսման ընթացքը նախ Ներսիսյան դպրոցում և ապա Ստարոսովի զիմնազիոնում, չէ բաւականամում դրամով, այլ վառուած բարձր ուսման փափազով, ուղևորում է Պետերբուրգ և այնուհետ համալսարանում ուսանելով մատունաժիրական զիստրիթը՝ վերադասում է 60-ական թուականներին և այնուհետև ամենայն սրտով ու հոգով մուիրում է իրեն ուսումնարամական վեճ գործին:

Մարտիրոս Սիմոնեանցը՝ ծառակել է երկար տարիներ՝ Ներսիսյան դպրամոցում, Գայիանեան օր. դպրոցում և իր կենքին վերջին տարիները՝ Էջմիածնի Գեղրգեան մենարանում: Բացի սրբածից նա միշտ ամենայն պատրաստակամութեամբ մասնակցել է հասարակական օգտառւու ու ազգաշար ընկերութեանց և ձեռնարկութեանց մեջ, երբ եղել է պարմազ և հարկադարութիւն» (Արա կյանքի գործությունը մասին ավելի մամրամասն տե՛ս «Հովհիտ», 1913, թիվ 13):

⁵ Հովհիտ տեղում:

⁶ «Հովհիտ» շաբաթական հանդես, 1914, թիվ 15:

նակ՝ Հովհ. Խաչատրյան) խճապատկեր որմնամկարը, որը նույնանու հոգեբանական խոր ընդիմանրացումներով բացահայտում է մեր ազգային մեծ նահատակի հերոսական կերպարը:

Վարդան Մամիկոնյանի հերոսական կերպարն է հավերժացնում նաև Երվանդ Քոչարի (1899-1979) կերտած վեհաշուր արձանը՝ կանգնեցված Երևանի Օղակաձև գրոսայզում: Նրա կերպարին անդրադարձել են նաև շատ այլ գեղամկարիչներ ու քամինկագործներ, սակայն պետք է նկատել, որ այդ բոլոր ստեղծագործություններն իրենց վրա ինչ-որ չափով կրում են օտարազգի անհայտ գեղամկարչի ձեռքով ստեղծված կտավի ազդեցությունը: Մեր կարծիքով, ինչ-որ չափով սովոր պատկերի ազդեցությունն է կրում նաև աղոթքանցի Ակարիչ Ս. Շարիֆզադեի ստեղծած Բաբեկի (Պապակ, 798 / 800-838) դիմանկարը⁷:

Այսօր ել սուրբ գորավարի լուսապատճեն կերպարը և Վարդանանց խորհուրդը պետք է ուղեկցեն մեզ, քանի որ Վարդանի անխախտ հավատքը փրկեց հայությանը: Կզան և կանցնեն բազմաթիվ դարեր, սակայն Վարդանի և իր ուխտապահ զինակիցների գործը կապրի հավերժ, իսկ երախտապարտ հայ ժողովուրդը բոլոր ժամանակների իր ամենամեծ հերոսին կիմիշի անհայտ Ակարչի ստեղծած այս դիմապատկերով:

⁷ Տե՛ս Իстория Азербайджана, ч. 1.-С древнейших времен до присоединения Азербайджана к России. Под редакцией академиков АН Азерб. ССР И. А. Гусейнова и А. С. Сумбат-заде. Баку, 1958, стр. 119.